



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

01 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 թվական

#### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին Ռաֆիկ Ջոհրաբյանը, Սրապ Թովմասյանը, Էդգար Խաչատրյանը, Վարդան Մարտիրոսյանը, Անդրանիկ Մկրտչյանը, Պետրոս Ստեփանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի տեղեկալ-Կարեն Հարությունյան, Ջովունի բնակավայրի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արշակ Պետրոսյան Ջորավան բնակավայրի վարչական ղեկավար Բաղդասար Թովմասյան, Արագյուղ բնակավայրի վարչական ղեկավար Ջորիկ Տիգրանյան, աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Թելուշ Հովհաննիսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Վարդան Մուրադխանյանը:

1. Լսեցին

**ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ **Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 1-ի N 9 արտահերթ նիստի օրակարգը.

1) Մինչև 20 քմ մակերեսով կառուցապատման իրավունքով տարածքների տրամադրման պայմանները սահմանելու մասին:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը օտարելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:

3) Հողամասը որպես համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

4) Եղվարդ համայնքի 2018 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39/

2.Լսեցին

**ՄԻՆՉԵՎ 20 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2. կետի ա) ենթակետի՝ **Եղվարդ համայնքի ավագանին որոշում է՝**

Համայնքի ղեկավարի առաջարկության համաձայն սահմանել Եղվարդ համայնքում ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար մինչև 20 քմ մակերեսով կառուցապատման իրավունքով տարածքներ տրամադրելու հետևյալ պայմանները. ժամկետ՝ 25 տարի, 1 քմ տարածքի վարձավճարի չափ՝ ամսական 100 դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40/

3.Լսեցին

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ **Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34 և 35 կետերով սահմանված պայմաններով Եղվարդ քաղաք, Ազատամարտիկների թաղամաս, 5-րդ փողոց, 2/1 հասցեում գտնվող, 07-004-0113-0045 կադաստրային համարի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,02817 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա առկա պարիսպը կառուցապատումն իրականացրած անձին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու վերաբերյալ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41/

4.Լսեցին

**ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանը՝ **Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.**

Եղվարդ համայնքի Արագյուղ բնակավայրի կադաստրային քարտեզի 07-012-0088-0002 ծածկագրի տակ գտնվող, անճշտության արդյունքում որպես քաղաքացու սեփականություն փոխանցված 0,1239 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42/

5.Լսեցին

**ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին» 90-րդ հոդվածի 6-րդ մասի, հիմք ընդունելով Եղվարդ համայնքի ղեկավարին «Ձորավանի միջնակարգ դպրոց», Բուժականի «Գեղամ Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց», «Արագյուղի «Տիգրանակերտ կրթարան» միջնակարգ դպրոց», «Ձովունու Ռուբիկ Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների տնօրենների գրությունները՝ դպրոցներում «Դպրոցական սնունդ» ծրագրի իրականացման հետ կապված վերանորոգման աշխատանքներ կատարելու և անհրաժեշտ գույք ձեռք բերելու վերաբերյալ, ինչպես նաև«Սարալանջի հիմնական դպրոց», «Եղվարդի Համլետ Թադևոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց», Բուժականի «Գեղամ Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների նախակրթարանների մեկական դաստիարակի 2018-2019 թվականների ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար աշխատավարձի վճարում կատարելու, «Տաթևեր» սոցիալական հասարակական կազմակերպության կողմից համայնքի բնակավայրերում իրականացվող բակային ճամբարների գործունեությանը աջակցելու նպատակով Եղվարդ համայնքի ավագանին որոշում է.

1. Եղվարդ համայնքի 2018 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել 3100.0 հազար դրամ:

2. Բյուջեի 9.2-1 ծրագրի 4637 հոդվածի <<1040.0>> թիվը փոխարինել <<3940.0>> թվով:
3. Բյուջեի 8.2-4 ծրագրի 4819 հոդվածի <<3200.0>> թիվը փոխարինել <<3400.0>> թվով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ

ՍԵՐժԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՇԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԼԱՎՐԵՆՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՐԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈԿԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԵՎՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՅՐ ԿԱՐԳՅԱՆ



Նիստին արձանագրեց՝ Վարդան Մուրադխանյանը